

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ
«ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ պարբերությունում «ընդերքի օգտագործման» բառերից հետո լրացնել «, սեյսմիկ պաշտպանության» բառերով.

Հոդված 2. Օրենքի 16-րդ հոդվածի 1-ին պարբերությունում «հուսալիության» բառից հետո լրացնել «, սեյսմիկ անվտանգության» բառերով.

Հոդված 3. Օրենքի 17-րդ հոդվածում 1-ին պարբերությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերություն.

«Քաղաքաշինական փաստաթղթերը մշակվում են, նկատի ունենալով «Սեյսմիկ պաշտպանության մասին» ՀՀ օրենքի դրույթները:»:

ՏԵՂԵԿԱՆՔ

**«ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԾԱԽՍԵՐԻ
ԿԱՄ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՓՈՓՈԽՄԱՆ ԿԵՐԱԲԵՐՅԱԼ**

Նախագծի ընդունումը 2009 թվականի պետական բյուջեում փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջացնում:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ՝**

Մ. ՇԱՀԳԵԼԴՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ
ԸՆԴՈՒՄՆԱԿԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում լրացումներ և
փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ՝

Մ. ՇԱՀԳԵԼԴՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱԿՈՐՈՒՄ

«ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԿԵՐԱԲԵՐՅԱԼ

«Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը հիմնավորվում է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածով և «Սեյսմիկ պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով: «Սեյսմիկ պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հոդված 8-ի ե) կետը սահմանում է, որ սեյսմիկ պաշտպանության բնագավառում լիազորված մարմինը՝ «ե) հաստատում է Հայաստանի Հանրապետության տարածքի սեյսմաշրջանացման, դրա խիտ բնակեցված շրջանների, հատուկ, կարելուր եւ ընդհանուր նշանակության օբյեկտների տարբեր մասշտաբների սեյսմամիկրոշրջանացման եւ սեյսմիկ ռիսկի քարտեզները.», իսկ հոդված 12-ը սահմանում է. «Սեյսմաշրջանացման քարտեզները հիմք են Հայաստանի Հանրապետության սեյսմակայուն շինարարության նախագծման նորմերի, հողօգտագործման, բնակչության տարաբնակեցման սխեմաների մշակման համար:

Սեյսմամիկրոշրջանացման քարտեզները պարտադիր հաշվի են առնվում քաղաքների և բնակավայրերի կառուցապատման, հատուկ, կարելուր եւ ընդհանուր նշանակության օբյեկտների նախագծման համար:»:

Նկատի ունենալով, որ այս դրույթները հոդված 8-ի մասով հաճախ հաշվի չեն առնվում քաղաքաշինական փաստաթղթերի կազմման ժամանակ, առաջարկվում է «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ՝

Մ. ՇԱՀԳԵԼԴՅԱՆ

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ

ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԿԵՐԱԲԵՐՅԱԼ ՇԱՀԱԳՐԳԻՈ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ

ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ԿԵՐԱԲԵՐՅԱԼ

N h/h	Առարկության հեղինակը, առաջարկույթ յան ստացման ամսաթիվը	Առարկության բովանդակությունը	Եզրակացություն
1	2	3	4
1.	ՀՀ ֆինանսների նախարարություն 4/4-Է-2-2407 09.04.2009թ.	Դիտողություններ և առաջարկություններ չունի	
2.	ՀՀ բնապահպանության նախարարություն 16.04.2009թ.	Առարկություններ և առաջարկություններ չունի	
3.	ՀՀ քաղաքաշինության նախարարություն 15.04.2009թ.	<p>1. Նախագծի հոդված 1-ով` գործող օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասում առաջարկվող լրացման անհրաժեշտությունը չկա, քանի որ քաղաքաշինական գործունեությունն ու դրա հետ կապված հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի համակարգը բաղկացած է սույն օրենքից, այլ օրենքներից և իրավական այլ ակտերից, ինչը համապատասխանում է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջին:</p> <p>2. Նախագծի հոդված 2-ով` գործող օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասում առաջարկվող լրացման անհրաժեշտությունը չկա, քանի որ «հուսալիություն» հասկացությունն իր մեջ ներառում է սեյսմիկ անվտանգությունը:</p>	<p>1. Չի ընդունվում, նկատի ունենալով, որ առարկության հեղինակների` նախագծի վերաբերյալ անհիմն ժխտողական վերաբերմունքը առարկության 3-րդ կետից տեղադրվել է առարկության 1-ին կետ: Առարկությունը կապ չունի ներկայացված նախագծի հոդված 1-ի հետ, որտեղ ի թիվս գործող օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասում շարադրված քաղաքաշինական գործունեության հետ առնչվող ոլորտների, առաջարկվում է լրացնել «, սեյսմիկ պաշտպանության» բառերը:</p> <p>2. Չի ընդունվում, նկատի ունենալով, որ «հուսալիություն» հասկացությունը կարող է բավարարել սեյսմաանվտանգ երկրներին, իսկ Հայաստանի նման սեյսմաանվտանգ տարածքի համար</p>

		<p>3. Նախագծի հոդված 3-ով՝ գործող օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասում առաջարկվող լրացման անհրաժեշտությունը չկա, քանի որ՝</p> <p>1) նման մոտեցում որդեգրելու դեպքում հարկ կլիներ թվարկել քաղաքաշինական փաստաթղթերի մշակմանն առնչվող բազմաթիվ օրենքների անվանումներ.</p> <p>2) գործող օրենքի 3-րդ հոդվածի «ը» ենթակետով քաղաքաշինական փաստաթղթերը սահմանված են որպես քաղաքաշինական գործնետության օբյեկտներ, իսկ 15-րդ հոդվածի 1-ին մասով առկա է անհրաժեշտ հղումն այլ օրենքներին և իրավական ակտերին, որոնք, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի հետ համատեղ կազմում են քաղաքաշինական գործնետությունն ու դրա հետ կապված հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի համակարգը.</p> <p>3) համաձայն գործող օրենքի 17-րդ հոդվածի 20-րդ մասի, քաղաքաշինական փաստաթղթերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման, փոփոխման կարգերը սահմանում է ՀՀ կառավարությունը, որոնցում հստակորեն մանրամասնեցված են համապատասխան փաստաթղթերի մշակման ընթացակարգերը, դրանց ելակետային նյութերին, առաջադրանքներին, նախագծերի կազմին ու բովանդակությանը ներկայացվող, այդ թվում՝ սեյսմիկ պաշտպանությանն առնչվող պահանջները:</p> <p>Մասնավորապես, ա. ՀՀ կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 19-ի «ՀՀ տարաբնակեցման գլխավոր նախագծի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման, փոփոխման և մոնիտորինգի անցկացման կարգը հաստատելու մասին» N 2164-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 13-րդ կետի «գ» ենթակետով սահմանված է, որ նախագծային փաստաթղթերում պետք է արտացոլվեն</p>	<p>«սեյսմիկ անվտանգություն» հասկացությունն իր մեջ կներառի հուսալիությունը:</p> <p>3. 2ի Ընդունվում ամբողջովին՝</p> <p>1) ենթակետով ներկայացված դիտողությունը ընդունվում է մասնակի,</p> <p>2) նկատի ունենալով սույն եզրակացության 1-ին կետի մեր պարզաբանումը (15-րդ հոդվածի 2-րդ մասի վերաբերյալ, որտեղ ի թիվս շարադրված քաղաքաշինական գործունետության հետ առնչվող ոլորտների բացակայում է սեյսմիկ պաշտպանության ոլորտը) և այն, որ -քաղաքաշինական փաստաթղթերում չեն արտացոլվում սեյսմիկ ռիսկի՝ տարածքների խոցելիության նվազեցման բոլոր տարրերը, -չեն կատարվում «Սեյսմիկ պաշտպանության մասին» ՀՀ օրենքի (որն «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքից ուշ է ընդունվել) դրույթներ, անընդունելի է հղումը «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասին, թե «առկա է անհրաժեշտ հղումն այլ օրենքներին և իրավական ակտերին»:</p> <p>3) Այս դիտողությունը, հիմնականում ներկայացված նախագծին չի առնչվում:</p> <p>Պարզաբանում այս առարկությանը. համաձայն գործող օրենքի 17-րդ հոդվածի 20-րդ մասի, քաղաքաշինական փաստաթղթերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման, փոփոխման կարգերը սահմանում է ՀՀ կառավարությունը (<u>բացի Երևան քաղաքի</u>), բայց նրանցում ներառված չեն «Սեյսմիկ պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հոդվածներ 8-ի ե), 12-ի, 15-ի, 16-ի կետերի դրույթները, որով, հիմնականում, պայմանավորված է մեր սույն և «Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության</p>
--	--	---	--

	<p>սեյսմատեկտոնական պայմանները, բնական և տեխնածին վտանգավոր պրոցեսներն ու երևույթները (սահքեր, հեղեղներ, խախտված հողեր և այլն)։</p> <p>բ. ՀՀ կառավարության 2003 թվականի օգոստոսի 8-ի «Տարածքային հատակագծման ուրվագծի և նախագծի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման և փոփոխման կարգը հաստատելու մասին» N 997-Ն որոշմամբ հաստատված հավելված N 3-ով սահմանված է, որ նախագծման համար անհրաժեշտ է ունենալ տարածքի սահմանված կարգով հաստատված մանրամասն կամ ընդհանուր սեյսմիկ շրջանացման քարտեզը,</p> <p>գ. ՀՀ կառավարության 2003 թվականի մայիսի 2-ի «ՀՀ քաղաքային և գյուղական համայնքների գլխավոր հատակագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման և փոփոխման կարգը հաստատելու մասին» N 609-Ն որոշմամբ հաստատված հավելված N 2-ով սահմանված է, որ նախագծման համար անհրաժեշտ է ունենալ տարածքի՝ սահմանված կարգով հաստատված սեյսմիկ միկրոշրջանացման քարտեզը, և այլն։</p> <p>4. Հիմնովին անընդունելի է «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի տեղեկանք-հիմնավորման վերջին պարբերությունն առ այն, որ քաղաքաշինական փաստաթղթերի կազմման ժամանակ չեն պահպանվում «Սեյսմիկ պաշտպանության մասին» ՀՀ օրենքի պահանջները։ Իրողությունն այն է, որ որևէ քաղաքաշինական ծրագրային փաստաթուղթ ՀՀ կառավարության քննարկմանը չի ներկայացվել առանց սեյսմիկ պաշտպանության բնագավառի լիազոր մարմնի կողմից սահմանված կարգով հաստատված սեյսմիկ շրջանացման (միկրոշրջանացման) քարտեզների։</p>	<p>կառավարության որոշման նախագիծը։</p> <p>4. Զի ընդունվում, այս դիտողությունը ներկայացված նախագծին չի առնչվում։ Ի լրումն «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի տեղեկանք-հիմնավորման վերջին պարբերությունը. Օրենքի դրույթին հակառակ, առանց սեյսմիկ պաշտպանության ոլորտի լիազոր մարմնի հետ համաձայնեցման հաստատվել են քաղաքաշինական ծրագրային փաստաթղթեր (օր. Երևանի Կենտրոն և Աջափնյակ համայնքների սեյսմիկ գոտիավորման քարտեզները), ինչպես նաև կարևոր նշանակության ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթեր (օր. Քաջարան-Սիսիան գազամուղի կառուցման փաստաթղթերը)։ Հնարավոր են նաև այլ՝ սեյսմիկ պաշտպանության ոլորտի լիազոր մարմնի հետ չհամաձայնեցված ծրագրային և համալիր կամ հատուկ համալիր փորձաքննության ենթակա փաստաթղթեր (ըստ գործող կարգի դրանցում պետք է լինի սեյսմիկ գոտիավորման քարտեզ), որոնց մասին լիազոր մարմինը կարող է տեղյակ չլինել։</p> <p>«Քաղաքաշինության մասին» ՀՀ</p>
--	---	--

		<p>5. Ելնելով վերոգրյալից, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունման անհրաժեշտությունը չկա:</p>	<p>օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը «Սեյսմիկ պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հոդվածներ 8-ի ե), 12-ի, 15-ի, 16-ի կետերի դրույթների կատարմանն է առնչվում:</p> <p>5. Ելնելով վերոգրյալից, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի լրամշակված նախագծի ընդունման անհրաժեշտությունը կա: Անհրաժեշտություն կա փոփոխություն կատարել նաև «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 20-րդ մասում՝ «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ընդունման առնչությամբ, նկատի ունենալով, որ դրա հետ կապված կառավարության որոշումներ արդեն ընդունվել են:</p>
4.	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն 15.04.2009թ.	Դիտողություններ և առաջարկություններ չունի	
5..	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն 14.04.2009թ.	«Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 3-րդ հոդվածը ձևակերպել հետևյալ խմբագրությամբ. «Քաղաքաշինական փաստաթղթերը մշակվում են հաշվի առնելով «Սեյսմիկ պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթները:»:	Ընդունվում է , նախագծի 3-րդ հոդվածը ձևակերպվել առաջարկված խմբագրությամբ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ՝

Մ. ՇԱՀԳԵԼԴՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՈՐՈՇՈՒՄ**

..... 2009 թվականի N ...-Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ և ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 21-ի «Բնակելի, հասարակական, արտադրական շենքերի ու շինությունների նախագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման և փոփոխման կարգը սահմանելու մասին» N 812 որոշման (այսուհետև՝ որոշում) մեջ կատարել հետևյալ լրացումները՝

1) որոշման 13.2. կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ. «Հատուկ համալիր, համալիր փորձաքննության ենթակա նախագծային փաստաթղթերը համաձայնեցվում են քաղաքաշինության, համայնքային ծառայության և տարածքային կառավարման, գյուղատնտեսության, բնապահպանության, պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության, անշարժ գույքի գրանցման, բնակչության և տարածքների պաշտպանության, սեյսմիկ պաշտպանության ոլորտների լիազոր մարմինների հետ:»,

2) որոշմամբ հաստատված N 2 հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր, «5»-րդ կետով.

«5. Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մարտի 13-ի N 237-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետով նշված սեյսմիկ պաշտպանության բնագավառի հատուկ նշանակություն ունեցող օբյեկտները:»:

3) որոշմամբ հաստատված N 3 հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր, «4.1»-րդ կետով.

«4.1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մարտի 13-ի N 237-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 2-րդ կետով նշված սեյսմիկ պաշտպանության բնագավառի կարևորագույն նշանակություն ունեցող օբյեկտները:»:

2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի մայիսի 14-ի «Բնակավայրերի տարածքների գոտևորման նախագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման և փոփոխման կարգը հաստատելու մասին» N 408 որոշմամբ հաստատված «Բնակավայրերի տարածքների գոտևորման նախագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման և փոփոխման կարգում»՝

11-րդ կետի 4-րդ նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Մարզպետը գոտևորման նախագծի առաջադրանքն ստանալուց հետո 15-օրյա ժամկետում այն քննարկում է մարզի խորհրդի նիստում և, դրական եզրակացություն ստանալու դեպքում, համաձայնեցնում է առաջադրանքը: Մարզպետը գոտևորման նախագծի առաջադրանքը ներկայացնում է Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, համայնքային ծառայության և տարածքային կառավարման, գյուղատնտեսության, բնապահպանության, պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության, անշարժ գույքի գրանցման, արտակարգ իրավիճակներից բնակչության և տարածքների պաշտպանության, սեյսմիկ պաշտպանության ոլորտների լիազոր մարմիններ՝ համաձայնեցման: Սույն կետով սահմանված փոխհարաբերություններն Երևանում իրականացվում են «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» և «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների պահանջներին համապատասխան:»:

3. Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 2-ի «Կառուցապատման նախագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման և փոփոխման կարգը հաստատելու մասին» N 608-Ն որոշմամբ հաստատված հավելված 2-ի դ) կետի «ինժեներաերկրաբանական» բառից հետո լրացնել «, սեյսմամիկրոշրջանացման» բառը:

4. Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 2-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական համայնքների գլխավոր հատակագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման և փոփոխման կարգը հաստատելու մասին» N 609 որոշմամբ հաստատված`

1) հավելվածի 11-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Մարզպետը 5-օրյա ժամկետում համաձայնություն տալուց հետո առաջադրանքի նախագիծը ներկայացնում է Հայաստանի Հանրապետության համայնքային ծառայության և տարածքային կառավարման, քաղաքաշինության, բնապահպանության, գյուղատնտեսության, պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության, անշարժ գույքի գրանցման, ջրային տնտեսության կառավարման, արտակարգ իրավիճակներից բնակչության և տարածքների պաշտպանության, սեյսմիկ պաշտպանության ոլորտների լիազոր մարմիններ (այսուհետև` շահագրգիռ պետական կառավարման մարմիններ)` համաձայնեցման: Սույն կետով սահմանված փոխհարաբերություններն Երևանում իրականացվում են «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» և «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների պահանջներին համապատասխան:»:

2) որոշմամբ հաստատված հավելված 1-ի 1-ին կետի է) ենթակետում «պատմամշակութային» բառից հետո լրացնել «սեյսմիկ վտանգի» բառերը:

5. Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 2-ի «Հողերի գոտիավորման և օգտագործման սխեմաների մշակման ու հաստատման կարգը հաստատելու մասին» N 625 որոշմամբ հաստատված հավելվածի 14-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Մարզպետը 5-օրյա ժամկետում համաձայնություն է տալիս առաջադրանքի նախագծին և այն ներկայացնում է Հայաստանի Հանրապետության համայնքային ծառայության և տարածքային կառավարման, քաղաքաշինության, բնապահպանության, գյուղատնտեսության, պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության, անշարժ գույքի գրանցման, ջրային տնտեսության կառավարման, արտակարգ իրավիճակներից բնակչության և տարածքների պաշտպանության, սեյսմիկ պաշտպանության ոլորտների լիազոր մարմիններ (այսուհետև` շահագրգիռ պետական կառավարման մարմիններ)` համաձայնեցման:»:

6. Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի օգոստոսի 8-ի «Տարածքային հատակագծման ուրվագծի և նախագծի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգը հաստատելու մասին» N 997 որոշման մեջ`

1) որոշմամբ հաստատված հավելվածի 8-րդ կետի առաջին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«8. Նախագիծը մշակվում է լիազոր մարմնի կողմից կազմված ու Հայաստանի Հանրապետության համապատասխան մարզպետի (մարզպետների), համայնքային ծառայության և տարածքային կառավարման, բնապահպանության, գյուղատնտեսության, պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության, անշարժ գույքի գրանցման, ջրային տնտեսության կառավարման, արտակարգ իրավիճակներից բնակչության և տարածքների պաշտպանության, սեյսմիկ պաշտպանության ոլորտների լիազոր մարմինների (այսուհետև` շահագրգիռ պետական կառավարման մարմիններ) հետ համաձայնեցված նախագծի մշակման առարադրանքի (այսուհետև` առաջադրանք) հիման վրա: Երևանում սույն կետով սահմանված փոխհարաբերություններն Երևանում իրականացվում են «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների պահանջներին համապատասխան:»:

2) հավելվածի 8-րդ կետում «ճշտվել» բառը փոխարինել «լրացվել» բառով.

3) հավելված 1-ի դ) կետում «տարածքի պաշտպանությանը» բառերից հետո լրացնել «, սեյսմիկ անվտանգությանը» բառերը:

7. Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի «Ավարտված շինարարության շահագործման փաստագրման կարգը հաստատելու մասին» N 626-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 11-րդ կետում «շահագործող կազմակերպությունների,» բառերից հետո լրացնել «արտակարգ իրավիճակներից բնակչության և տարածքների պաշտպանության,» բառերը:

8. Հայաստանի Հանրապետության կառավարության 2 փետրվարի 2002 թվականի «Հայաստանի Հանրապետությունում շենքերի, շինությունների կամ դրանց մի հատվածի գործառական նշանակությունը փոփոխելու կարգը հաստատելու մասին» N 88 որոշմամբ հաստատված կարգի 8-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «8. Պետական սեփականություն հանդիսացող հանրակրթական, ուսումնական, կոմունալ տնտեսության, ինժեներական ենթակառուցվածքների, պատմամշակութային օբյեկտների գործառական նշանակությունը փոփոխվում է Հայաստանի Հանրապետության համապատասխան ոլորտի, ինչպես նաև քաղաքաշինության, արտակարգ իրավիճակներից բնակչության և տարածքների պաշտպանության, սեյսմիկ պաշտպանության ոլորտների լիազոր մարմինների մասնագիտական եզրակացության հիման վրա»:

9. Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի դեկտեմբերի 31-ի «Պետական քաղաքաշինական կադաստրի վարման և քաղաքաշինական գործունեության մոնիթորինգի անցկացման կարգը հաստատելու մասին» N 802 որոշմամբ հաստատված կարգում`

1) 1-ին կետի երկրորդ նախադասության մեջ «սեյսմիկ իրադրության» բառերը փոխարինել «սեյսմիկ շրջանացման և սեյսմիկ խոցելիության» բառերով,

2) 6-րդ կետի ա) ենթակետում «Ճարտարագիտաերկրաբանական հետախուզությունների ու հետազոտությունների» բառերից, 13-րդ կետի է) ենթակետում «տեղագրագեոդեզիական հանույթների և ինժեներաերկրաբանական» բառերից, 14-րդ կետի դ) ենթակետում «տեղագրագեոդեզիական հանույթների և ինժեներաերկրաբանական» բառերից, 15-րդ կետի դ) ենթակետում «տվյալներ ինժեներաերկրաբանական» բառերից հետո լրացնել «, սեյսմիկ գոտիավորման» բառերը:

10. Հայաստանի Հանրապետության կառավարության 13 մարտի 1999թվականի «Գործառական տարածքների գլխավոր հատակագծերի նախագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման և փոփոխման կարգը սահմանելու մասին» N 150 որոշմամբ հաստատված կարգի 7-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Մարզպետը 5-օրյա ժամկետում համաձայնություն տալուց հետո առաջադրանքի նախագիծը ներկայացնում է Հայաստանի Հանրապետության համայնքային ծառայության և տարածքային կառավարման, քաղաքաշինության, բնապահպանության, գյուղատնտեսության, պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության, անշարժ գույքի գրանցման, ջրային տնտեսության կառավարման, արտակարգ իրավիճակներից բնակչության և տարածքների պաշտպանության, սեյսմիկ պաշտպանության ոլորտների լիազոր մարմիններ (այսուհետև` շահագրգիռ պետական կառավարման մարմիններ)` համաձայնեցման: Սույն կետով սահմանված փոխհարաբերություններն Երևանում իրականացվում են «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» և «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների պահանջներին համապատասխան: Գործառական տարածքի գլխավոր հատակագծի նախագիծը համաձայնեցվում է ներկայացվելու օրվանից մեկամսյա ժամկետում»:

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ և ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՏՈՒՄ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՄ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՓՈՓՈԽՄԱՆ ԿԵՐԱԲԵՐՅԱԼ

Որոշման ընդունումը 2009 թվականի պետական բյուջեում փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջացնում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ՝

Մ. ՇԱՀԳԵԼԴՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ և ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՄՄԱՆ
ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում լրացումներ և
փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ՝

Մ. ՇԱՀԳԵԼԴՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱԿՈՐՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ և ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի մշակումը հիմնավորվում է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածով և «Սեյսմիկ պաշտպանության մասին» ՀՀ օրենքի պահանջով:

«Սեյսմիկ պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հոդված 8-ի ե) կետը սահմանում է, որ սեյսմիկ պաշտպանության բնագավառում լիազորված մարմինը՝ «ե) հաստատում է Հայաստանի Հանրապետության տարածքի սեյսմաշրջանացման, դրա խիտ բնակեցված շրջանների, հատուկ, կարելուր եւ ընդհանուր նշանակության օբյեկտների տարբեր մասշտաբների սեյսմամիկրոշրջանացման եւ սեյսմիկ ռիսկի քարտեզները.», իսկ հոդված 12-ը սահմանում է. «Սեյսմաշրջանացման քարտեզները հիմք են Հայաստանի Հանրապետության սեյսմակայուն շինարարության նախագծման նորմերի, հողօգտագործման, բնակչության տարաբնակեցման սխեմաների մշակման համար:

Սեյսմամիկրոշրջանացման քարտեզները պարտադիր հաշվի են առնվում քաղաքների և բնակավայրերի կառուցապատման, հատուկ, կարելուր եւ ընդհանուր նշանակության օբյեկտների նախագծման համար:»:

Հայաստանի Հանրապետության և Երևան քաղաքի տարածքում սեյսմիկ ռիսկի նվազեցման Համալիր ծրագրերով ՍՊԱԾ-ը հանդիսանում է ծրագրի պատվիրատուն և պատասխանատու կատարողը, պատասխանատվություն է կրում ծրագրի իրականացման համար, բայց շրջանցվում է լիազորված մարմնի լիազորությունները և առանց նրա հետ համաձայնեցման հաստատվում են քաղաքաշինական ծրագրային փաստաթղթեր (օր. Երևանի Կենտրոն և Աջափնյակ համայնքների գոտիավորման քարտեզները), ինչպես նաև ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթեր (օր. Քաջարան-Սիսիան գազամուղի կառուցման փաստաթղթերը): Ընդունվում են սեյսմիկ պաշտպանության մասին ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի ե) ենթակետին հակասող իրավական ակտեր, ՀՀ կառավարության 03.05.2007թ. թիվ 573-Ն որոշման 17 կետով, առանց ծառայության կարծիքը հարցնելու, փոփոխվել է 30.07.1998թ. թիվ 478 որոշման 9-րդ կետը:

Առաջարկվող նախագիծը ենթադրում է «Սեյսմիկ պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հոդված 8-ի և հոդված 12-ի հաշվառում քաղաքաշինական փաստաթղթերի կազմման ժամանակ:

Ներկայացվող նախագծով, հիմնականում, առաջարկվում է կառավարության որոշումներում նշել ոչ թե քաղաքաշինական փաստաթղթերի հաստատմանը մասնակցող նախարարությունների, այլ այդ փաստաթղթերի հաստատմանը մասնակցող ոլորտների լիազոր մարմինները, նկատի ունենալով, որ փաստաթղթերի հաստատմանը մասնակցող ոլորտների լիազոր մարմինները փոփոխվելու դեպքում ոլորտը դուրս է մնում գործընթացից, ինչպես ՀՀ կառավարության 03.05.2007թ. թիվ 573-Ն որոշման 17 կետը:

Նկատի ունենալով, որ այս դրույթները հոդված 8-ի մասով հաճախ հաշվի չեն առնվում քաղաքաշինական փաստաթղթերի կազմման ժամանակ, առաջարկվում է Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ և ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ
ՇԱՀԱԳՐԳԻՌ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

N h/h	Առարկության հեղինակը, առաջարկության ստացման ամսաթիվը	Առարկության բովանդակությունը	Եզրակացություն
1	2	3	4
1.	ՀՀ ֆինանսների նախարարություն 4/4-Է-2-2407 09.04.2009թ.	Դիտողություններ և առաջարկություններ չունի	
2.	ՀՀ բնապահպանության նախարարություն 16.04.2009թ.	Առարկություններ և առաջարկություններ չունի	
3.	ՀՀ քաղաքաշինության նախարարություն 15.04.2009թ.	<p>1. ՀՀ կառավարության 30.07.1998թ N 478 որոշման մեջ առաջարկվող փոփոխությունների վերաբերյալ. ՀՀ կառավարության 09.04.2009թ.նիստի 20-րդ հարցով որոշումը ուժը կորցրած է ճանաչվել:</p> <p>2. ՀՀ կառավարության 21.12.1998թ N 812 որոշման մեջ առաջարկվող փոփոխությունների վերաբերյալ. առաջարկությունն անընդունելի է, քանի որ 02.02.2002թ. N 96 որոշմամբ սահմանված են ՀՀ կառավարության որոշմամբ ստեղծված ժամանակավոր փորձաքննական մարմնի միջոցով հատուկ համալիր փորձաքննություն անցկացնելու դեպքերը: -- Մինույն ժամանակ, խնդրո առարկա հարցն առավել հստակեցնելու նպատակով առաջարկվում է առաջարկությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 21-ի «Բնակելի, հասարակական, արտադրական շենքերի ու շինությունների նախագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման և փոփոխման կարգը սահմանելու մասին» N 812 որոշման</p>	<p>1. Ընդունվել է. նախագծից հանվել է որոշման վերաբերյալ առաջարկվող փոփոխությունը:</p> <p>2. Ընդունվել է, նախագծում կատարվել է առաջարկվող փոփոխությունը, ինչպես նաև ավելացվել է նոր ենթակետ «1) որոշման 13.2. կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ. «Հատուկ համալիր, համալիր փորձաքննության ենթակա նախագծային փաստաթղթերը համաձայնեցվում են քաղաքաշինության, համայնքային ծառայության և տարածքային կառավարման, գյուղատնտեսության, բնապահպանության, պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության, անշարժ գույքի գրանցման, բնակչության և տարածքների պաշտպանության, սեյսմիկ պաշտպանության ոլորտների լիազոր մարմինների հետ:»</p>

(այսուհետև՝ որոշում) մեջ կատարել հետևյալ լրացումները՝

1) որոշմամբ հաստատված N 2 հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր, «5»-րդ կետով.
 «5. Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մարտի 13-ի N 237-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետով նշված սեյսմիկ պաշտպանության բնագավառի հատուկ նշանակություն ունեցող օբյեկտները:»:

2) որոշմամբ հաստատված N 3 հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր, «4.1»-րդ կետով.
 «4.1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մարտի 13-ի N 237-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 2-րդ կետով նշված սեյսմիկ պաշտպանության բնագավառի կարևորագույն նշանակություն ունեցող օբյեկտները:»:

3. ՀՀ կառավարության 14.05.2001թ N 408 որոշման մեջ առաջարկվող փոփոխությունների վերաբերյալ.

1) Հաշվի առնելով, որ պետական կառավարման մարմինը կարող է լիազոր մարմին ճանաչվել մի շարք բնագավառների համար, ինչպես նաև այն, որ ՀՀ կառավարության 09.04.2009թ. միստի 19-րդ հարցով ընդունվել է «ՀՀ կառավարության 14.05.2009թ. N 408 որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, առաջարկվում է նախագծի 3-րդ կետով (1-ին ենթակետի մասով) ներկայացված առաջարկությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի մայիսի 14-ի «Բնակավայրերի տարածքների գոտևորման նախագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման և փոփոխման կարգը հաստատելու մասին» N 408 որոշմամբ հաստատված «Բնակավայրերի տարածքների գոտևորման նախագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման և փոփոխման կարգի» 11-րդ կետի 4-րդ նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Մարզպետը գոտևորման նախագծի առաջադրանքն ստանալուց հետո 15-օրյա ժամկետում այն քննարկում է մարզի խորհրդի նիստում և, դրական եզրակացություն ստանալու դեպքում, համաձայնեցնում է առաջադրանքն ու ներկայացնում Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարին, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության

3. Ընդունվում է մասամբ.

1) **Չի ընդունվում,** նկատի ունենալով, որ փաստաթղթերի հաստատմանը մասնակցող ոլորտների լիազոր մարմինները փոփոխվելու դեպքում ոլորտը կարող է դուրս մնալ փաստաթղթերի հաստատման գործընթացից, ինչպես դա եղել է ՀՀ կառավարության 03.05.2007թ. թիվ 573-Ն որոշման դեպքում, երբ որոշման 17 կետով փոփոխվել է 30.07.1998թ. թիվ 478 որոշման 9-րդ կետը և Օրենքի դրույթին հակառակ, առանց սեյսմիկ պաշտպանության ոլորտի լիազոր մարմնի հետ համաձայնեցման հաստատվել են քաղաքաշինական ծրագրային փաստաթղթեր (օր. Երևանի Կենտրոն և Աջափնյակ համայնքների սեյսմիկ գոտիավորման քարտեզները), ինչպես նաև ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթեր (օր. Քաջարան-Սիսիան գազամուղի կառուցման փաստաթղթերը): Հնարավոր են նաև այլ՝ սեյսմիկ պաշտպանության ոլորտի լիազոր մարմնի հետ չհամաձայնեցված ծրագրային և համալիր կամ հատուկ համալիր փորձաքննության ենթակա փաստաթղթեր (դրանցում պետք է լինի սեյսմիկ գոտիավորման քարտեզ), որոնց մասին լիազոր մարմինը կարող է տեղյակ չլինել:

	<p>նախարարին, Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարին, Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարին, Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարին, Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարին, Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարին, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարին, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առնթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահին՝ համաձայնեցման:»:</p> <p>2) նախագծի 3-րդ կետի 2-րդ ենթակետով ներկայացված առաջարկության անհրաժեշտությունը չկա, քանի որ տվյալ կետը փոփոխվել է ՀՀ կառավարության 09.04.2009թ. նիստի 19-րդ հարցով ընդունված իրավական ակտի նախագծով:</p> <p>4. ՀՀ կառավարության 02.02.2002թ. N 96 որոշման մեջ առաջարկվող փոփոխությունների վերաբերյալ.</p> <p>1) Նախագծի 4-րդ կետի 1-ին ենթակետով ներկայացված առաջարկության անհրաժեշտությունը վերանում է, հաշվի առնելով սույն գրությամբ ներկայացված առաջարկությունների և առարկությունների (այսուհետ՝ գրության) II մասի 2-րդ կետի 1- ին և 2-րդ ենթակետերով ամրագրված լրացումները:</p> <p>2) Նախագծի 4-րդ կետի 2-րդ ենթակետով ներկայացված առաջարկության անհրաժեշտությունը վերանում է, հաշվի առնելով սույն գրությամբ ներկայացված առաջարկությունների և առարկությունների II մասի 2-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով ամրագրված լրացումները:</p> <p>5. ՀՀ կառավարության 04.09.2003թ. N 1530- Ն որոշման մեջ առաջարկվող լրացումների վերաբերյալ.</p> <p>1) Նախագծի 5-րդ կետի 1-ին ենթակետով ներկայացված առաջարկության անհրաժեշտությունը վերանում է, հաշվի առնելով սույն գրության II մասի 2-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով ամրագրված լրացումները:</p> <p>2) Նախագծի 5-րդ կետի 2-րդ ենթակետով ներկայացված առաջարկության անհրաժեշտությունը վերանում է, հաշվի առնելով սույն գրության II մասի 2-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով ամրագրված լրացումները:</p> <p>6. ՀՀ կառավարության 02.05.2003թ. N 608- Ն որոշման մեջ առաջարկվող փոփոխությունների վերաբերյալ.</p> <p>Նախագծի 6-րդ կետով ներկայացված առաջարկության վերաբերյալ հայտնում եմ.</p>	<p>2) Ընդունվում է, նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:</p> <p>4. Ընդունվել է, նկատի ունենալով նախագծի 2-րդ կետի համար առաջարկված և ընդունված տարբերակը:</p> <p>2) Ընդունվում է, նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:</p> <p>5. Ընդունվել է, նկատի ունենալով նախագծի 2-րդ կետի համար առաջարկված և ընդունված տարբերակը:</p> <p>2) Ընդունվում է, նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:</p> <p>6. 2ի ընդունվում, մեր առաջարկը «Սեյսմիկ պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ պարբերությամբ ներկայացված պահանջ է:</p>
--	--	--

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 14-րդ մասի «ա» ենթակետով, կառուցապատման նախագծերը դասվում են ճարտարապետաշինարարական փաստաթղթերի թվին, ուստի նախագծվում են քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի (սեյսմիկ միկրոշրջանացման քարտեզների ներառմամբ) դրույթներին համապատասխան և նորմատիվատեխնիկական փաստաթղթերով սահմանված, այդ թվում՝ սեյսմիկ նորմերի պահանջների պարտադիր ապահովմամբ:-- Այդ իսկ պատճառով, առանձին շենքի կամ շենքերի համալիրի համար հատուկ կազմված միկրոշրջանացման քարտեզների վերաբերյալ պարտադիր պահանջի սահմանումը ներկայանում է ոչ նպատակահարմար:

7. ՀՀ կառավարության 02.05.2003թ. N 609-Ն որոշման մեջ առաջարկվող փոփոխությունների վերաբերյալ.

1) Հաշվի առնելով սույն գրության II մասի 3-րդ կետի 1-ին ենթակետով բերված հիմնավորումը, նախագծի 7-րդ կետով (1-ին ենթակետի մասով) ներկայացված առաջարկությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 2-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական համայնքների գլխավոր հատակագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման և փոփոխման կարգը հաստատելու մասին» N 609-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 11-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Մարզպետը 5-օրյա ժամկետում համաձայնություն տալուց հետո առաջադրանքի նախագիծը ներկայացնում է Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարին, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարին, Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարին, Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարին, Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարին, Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարին, Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարին, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարին, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առնթեր անշարժ գույքի կադաստրի պետական կրմիտեի

7. Զի ընդունվում.

1) նկատի ունենալով սույն եզրակացության 3-րդ կետի 1)-ին ենթակետի պարզաբանումը:

նախագահին (այսուհետ՝ շահագրգիռ մարմիններ)՝ համաձայնեցման:»:

2) նախագծի 7-րդ կետի 2-րդ ենթակետով ներկայացված առաջարկության անհրաժեշտությունը չկա, քանի որ նշված պահանջը հաշվի է առնված նույն հավելվածի 1-ին կետի «ը» ենթակետով:

8. ՀՀ կառավարության 02.05.2003թ. N 625-Ն որոշման մեջ առաջարկվող փոփոխությունների վերաբերյալ.

Նախագծի 8-րդ կետով ներկայացված առաջարկությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 2-ի «Հողերի գոտիավորման և օգտագործման սխեմաների մշակման ու հաստատման կարգը հաստատելու մասին» N 625-Ն որոշմամբ հաստատված «Հողերի գոտիավորման և օգտագործման սխեմաների մշակման ու հաստատման կարգի» 14-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«14. Մարզպետը 5-օրյա ժամկետում համաձայնություն է տալիս առաջադրանքի նախագծին և այն ներկայացնում Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարին, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարին, Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարին, Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարին, Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարին, Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարին, Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարին, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարին, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առնթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետին, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առնթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահին (այսուհետ՝ շահագրգիռ մարմիններ)՝ համաձայնեցման:»:

9. ՀՀ կառավարության 08.08.2003թ. N 997-Ն որոշման մեջ առաջարկվող փոփոխությունների վերաբերյալ.

1) Նախագծի 9-րդ կետով (1-ին ենթակետի մասով) ներկայացված առաջարկությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հայաստանի Հանրապետության

2) Չի ընդունվում, նկատի ունենալով, որ նշված ը) կետը վերաբերվում է տարածքների պաշտպանության միջոցառումներին (մինչև այժմ ներկայացված նախագծերում չկան Հայաստանի համար կարևոր՝ սեյսմիկ ռիսկի նվազեցման միջոցառումներ), իսկ է) կետը՝ սահմանափակումներին:

8. Չի ընդունվում, նկատի ունենալով սույն եզրակացության 3-րդ կետի 1)-ին ենթակետի պարզաբանումը:

9. Չի ընդունվում.

1) նկատի ունենալով սույն եզրակացության 3-րդ կետի 1)-ին ենթակետի պարզաբանումը:

կառավարության 2003 թվականի օգոստոսի 8-ի «Տարածքային հատակագծման ուրվագծի և նախագծի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգը հաստատելու մասին» N 997-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 8-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«8. Նախագիծը մշակվում է լիազորված մարմնի կողմից կազմված ու Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի, Հայաստանի Հանրապետության համապատասխան մարզպետի (մարզպետների), Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարի, Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի, Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարի, Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարի, Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարի, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարի, կառավարությանն առնթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի (այսուհետ՝ շահագրգիռ մարմիններ) հետ համաձայնեցված՝ նախագծի մշակման առաջադրանքի ((այսուհետ՝ առաջադրանք) հիման վրա: Առանձին դեպքերում, կախված նախագծի առանձնահատկություններից, շահագրգիռ մարմինների ցանկը կարող է *ճշտվել* առաջադրանքով:»:

2) Նախագծի 9-րդ կետի 2-րդ ենթակետով ներկայացված առաջարկության անհրաժեշտությունը չկա, քանի որ գործող իրավական ակտի նույն կետում նշված «բնական և տեղնածին բնական երևույթներ» հասկացությունը ներառում է այդ թվում՝ սեյսմիկ վտանգը:

10. ՀՀ կառավարության 08.05.2003թ. N 626-Ն որոշման մեջ առաջարկվող փոփոխությունների վերաբերյալ.
Նախագծի 10-րդ կետով ներկայացված առաջարկության անհրաժեշտությունը վերանում է, հաշվի առնելով սույն գրության II մասի 2-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով ամրագրված լրացումները:

11. ՀՀ կառավարության 02.02.2002թ. N 88 որոշման մեջ առաջարկվող փոփոխությունների վերաբերյալ.
Նախագծի 11-րդ կետով ներկայացված առաջարկությունն ընդունելի չէ, քանի որ արդեն իսկ գոյություն ունեցող օբյեկտների գործառնական նշանակության փոփոխության վերաբերյալ մասնագիտական եզրակացություն կազմելու

2) **Չի ընդունվում,** նկատի ունենալով, որ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերում չեն արտացոլվում տարածքների խոցելիության նվազեցման բոլոր տարրերը և սեյսմիկ ռիսկի նվազեցման՝ սեյսմիկ անվտանգության դրույթներ:

10. Չի ընդունվում, նկատի ունենալով, որ արված դիտողությունը չի առնչվում ներկայացված նախագծին:

11. Ընդունվում է մասնակի. գոյություն ունեցող օբյեկտների գործառնական նշանակության փոփոխության վերաբերյալ մասնագիտական եզրակացություն կազմելու համար անհրաժեշտ է ներգրավել նաև արտակարգ իրավիճակներից բնակչության և տարածքների պաշտպանության

		<p>համար բավարար է ներգրավել առաջարկվող գործառնական նշանակության հետ առնչվող նախարարությունները և գերատեսչությունները:</p> <p>12. ՀՀ կառավարության 31.12.1999թ. N 802 որոշման մեջ առաջարկվող փոփոխությունների վերաբերյալ.</p> <p>1) Նախագծի 12-րդ կետի 1-ին ենթակետով ներկայացված առաջարկությունն ընդունելի չէ, քանի որ «սեյսմիկ իրադրություն» արտահայտությունն ավելի ընդգրկուն հասկացություն է սեյսմիկ վտանգի ընդհանուր բնութագիրը ներկայացնելու համար:</p> <p>2) Նախագծի 12-րդ կետի 1-ին ենթակետով ներկայացված առաջարկության անհրաժեշտությունը չենք գտնում, քանի որ համաձայն «Ինժեներական հետազննություններ շինարարության համար» ՀՀՇՆ 1-2.01-99-ի «5. Ինժեներական հետազննություններ» բաժնի պահանջների՝ սեյսմոլոգիական և երկրաֆիզիկական ուսումնասիրությունների նյութերը և սեյսմամիկրոշջանացման քարտեզները ներառված են ինժեներաերկրաբանական հետազննությունների տեխնիկական հաշվետվության կազմում:</p> <p>13. ՀՀ կառավարության 1999թ. N 150 որոշման մեջ առաջարկվող փոփոխությունների վերաբերյալ.</p> <p>Նախագծի 13-րդ կետով ներկայացված առաջարկության անհրաժեշտությունը չկա, քանի որ գործառնական տարածքների գլխավոր հատակագծերի նախագծերը մշակվում են քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի դրույթներին համապատասխան, որոնք, իրենց հերթին, ենթակա են շահագրգիռ մարմինների հետ համաձայնեցման՝ օրենսդրությամբ սահմանված կարգով: Այս առումով, առաջադրանքի նախագիծը՝ նույն շահագրգիռ մարմինների հետ համաձայնեցման վերաբերյալ առաջարկությունը ներկայանում է ոչ նպատակահարմար:</p>	<p>ոլորտի լիազոր մարմինը, նկատի ունենալով «Սեյսմիկ պաշտպանության մասին» ՀՀ օրենքի հոդված 16-ի գ) կետի պահանջը: Տեքստում կատարվել են խմբագրական փոփոխություններ:</p> <p>12. Չի ընդունվում.</p> <p>1) Նախագծի 12-րդ կետի 1-ին ենթակետի վերաբերյալ. «սեյսմիկ իրադրություն» արտահայտությունն ավելի ընդգրկուն հասկացություն չէ և այն կիրառվում է ընթացիկ, ոչ թե երկարաժամկետ սեյսմիկ վտանգը գնահատելու համար: Սեյսմիկ պաշտպանության ոլորտի հասկացություններն հստակեցված են «Սեյսմիկ պաշտպանության մասին» ՀՀ օրենքում, որը «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքից ուշ է ընդունվել:</p> <p>2) Ի լրումն նախագծի 12-րդ կետի 1-ին ենթակետի վերաբերյալ պարզաբանման, 1-ին և 2-րդ ենթակետերում փոփոխությունը և լրացումը ՀՀՇՆ 1-2.01-99-ի «5. Ինժեներական հետազննություններ»-ում փոփոխություն չի նախատեսում:</p> <p>13. Չի ընդունվում.</p> <p>Գործառնական տարածքների գլխավոր հատակագծերի նախագծերը, ինչպես -Բնակավայրերի տարածքների գոտևորման նախագծերը, -Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական համայնքների գլխավոր հատակագծերը, -Ողերի գոտիավորման և օգտագործման սխեմաները չենք է նախապես համաձայնեցնել կտների ճարտարապետաշինարարա- ղկա են ընդհանուր, մանրամասն և ին» ՀՀ օրենքի հոդված 8-ի ե) կետի ուղղության ոլորտի լիազոր մարմնի հետ:</p>
		<p>ՀՀ քաղաքաշինության նախարարության ներկայացրած 13 կետերի վերաբերյալ արված 19 դիտողություններից և առաջարկներից չեն ընդունվել 10-ը, 2-ը ընդունվել են մասնակի, ընդունվել են 7-ը և նախագծում կատարվել են համապատասխան լրամշակումներ:</p>	
4.	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	Նախագծի 12-րդ կետում նշել ՀՀ կառավարության համապատասխան որոշման վերնագիրը:	Ընդունվել է, նախագծում կատարվել է համապատասխան լրացում:

	15.04.2009		
5.	ՀՀ էկոնոմիկայի նախարարու- թյուն 14.04.2009	Դիտողություններ և առաջարկություններ չունի	

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ՝

Մ. ՇԱՀԳԵԼԴՅԱՆ

ՆԱԽԱԳԾԻ ՄՇԱԿՄԱՆ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԽՈՒՄՔԸ

Նախագիծը մշակել են «ՍՊԱԾ» գործակալության համակարգի հետևյալ աշխատակիցները. Ա. Անտոնյանը, Հ. Պետրոսյանը, Ռ. Բաղդասարյանը: